Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 403 - Ա
որոշման

# ԾՐԱԳԻՐ

## «ՔՎԱՆՏԱ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանում ձևավորել քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի և տեխնոլոգիաների զարգացման մշակույթ և Հայաստանը վերածել տարածաշրջանային գիտակրթական կենտրոնի:<br>Ծրագիրը նպատակ ունի պատրաստել բարձրորակ մասնագետներ, որոնք կարող են՝<br>• իրականացնել գիտահետազոտական աշխատանք,<br>• հիմնել նորարարական ընկերություններ, որոնք հետագայում հնարավոր կլինի վերածել հայրենական տեխնոլոգիական ընկերությունների:<br><br>Մինչ մագիստրատուրայի ընդունելության գործընթացի մեկնարկը ծրագրի հավանական մասնակիցներին վերհանելու նպատակով կազմակերպվելու է օլիմպիադա, գիտաժողով, ամառային դպրոց, որտեղ ուսանողները կունկնդրեն ինտերակտիվ դասախոսություններ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամ՝ (Հայաստանի Հանրապետություն, 0010 քաղ. Երևան, Տերյան 1/1, ընտ. 5, ՀՎՀՀ՝ 01282864): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «ԻՄ ՔԱՅԼԸ» բարեգործական հիմնադրամ՝ (Հայաստանի Հանրապետություն, 0010 քաղ. Երևան, Տերյան 1/1, ընտ. 5, ՀՎՀՀ՝ 01282864): |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 148,220,000 դրամ: |
| 7. | Բարեգործությունն ստացողը | Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք ունեն բնական գիտությունների (ֆիզիկա, քիմիա), ինչպես նաև ճարտարագիտության և մաթեմատիկայի բնագավառներում բակալավրի որակավորում: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը ներառյալ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ամառային դպրոցի, օլիմպիադայի և գիտաժողովի կազմակերպում՝ 24,500,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը:<br>2. Ծրագրի պաշտոնական բացման և փակման միջոցառումներ՝ 2,150,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը:<br>3. Օտարերկրյա դասախոսական անձնակազմի հրավիրման և հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում՝ 16,390,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը:<br>4. Դասախոսական ծառայությունների ձեռքբերում՝ 81,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը:<br>5. Տարածքի վարձակալություն՝ (լսարան, ամբիոն, լաբորատորիա) 7,080,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը:<br>6. Ծրագրի միջոցառումների լուսաբանում և իրազեկում 12,500,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը:<br>7. Համակարգչային տեխնիկայի, պրոյեկտորի, գրենական պիտույքների և տպագրական ծառայությունների ձեռքբերում 4,600,000 դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | Նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունիսի 15-ից մինչև 2024 թվականի հունիսի 1-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ամառային դպրոցի, օլիմպիադայի և գիտաժողովի կազմակերպում՝ հյուրանոցային ծառայությունների, սնունդի, գրենական պիտույքների և անվանաքարտերի ձեռքբերում 24,500,000 դրամ:<br>2. Ծրագրի պաշտոնական բացման և փակման միջոցառումներ՝ տարածքի վարձակալություն, երաժիշտների ծառայությունների և սնունդի ձեռքբերում 2,150,000 դրամ:<br>3. Ծրագրի միջոցառումների լուսաբանում և իրազեկում՝ կայքի պատրաստում, բրենդավորում, մեդիա արշավ՝ 12,500,000 դրամ :<br>4. Դասախոսական ծառայությունների ձեռքբերում՝ 81,000,000 դրամ:<br>5. Օտարերկրյա դասախոսական անձնակազմի հրավիրման (ավիատոմսերի ձեռքբերում) 4,840,000 դրամ:<br>6. Հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում՝ 11,550,000 դրամ:<br>7. Տարածքի վարձակալություն (լսարան, ամբիոն, լաբորատորիա) 7,080,000 դրամ:<br>8. Համակարգչային տեխնիկայի և պրոյեկտորի ձեռքբերում՝ 2,000,000 դրամ:<br>9. Տպագրական ծառայությունների (դիպլոմների ձևավորում և տպագրություն, «Պայուսակ» ծրագրի տարբերանշանով, գլխարկ, շապիկ, կրծքանշան) և գրենական պիտույքների պարագաների ձեռքբերում՝ 2,600,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | 1. Ծրագրի պաշտոնական բացման և փակման միջոցառումներ՝ 2,150,000 դրամ.<br>2. Ծրագրի լուսաբանում և իրազեկում՝ 12,500,000 դրամ: Ուսումնական տարվա սկզբում և ընթացքում նախատեսվում է իրականացնել կայքի պատրաստում, բրենդավորում, միջոցառումների լուսաբանում և իրազեկում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «ԻՄ ՔԱՅԼԸ» հիմնադրամը համագործակցում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09.06.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ